

**ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԸ ՀԱՄԱԼՐԱԾ ԱՐԱՔԱԿԱՆ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՐԵՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՖԱՆԵՐՈՒՄ**

ԽԱՉԱՏՐՅԱՆ Մ. Գ.

Հայագիտության մեջ արաբական փոխառությունների թեման արդիական է եղել բոլոր ժամանակներում, որն առաջին հերթին պայմանավորված է այդ փոխառությունների բավական մեծ թվով¹: Պատահական չէ, որ մասնագիտական գրականության մեջ նշված հարցին դեռևս XIX դ. անդրադարձել են այնպիսի լեզվաբաններ, ինչպիսիք են՝ Հ. Հյուբշմանը², Կարստը³, Ք. Պատկանյանը⁴, Ա. Այտընյանը⁵, որոնց շարքը հետագայում համալրել են Հ. Աճառյանը⁶, Ս. Ղազարյանը⁷, Հ. Մուրադյանը⁸, Մ. Մուրադյանը⁹, Ռ. Ղազարյանը¹⁰, Ս. Անթոսյանը¹¹ և ուրիշներ:

Այսուհանդերձ, նշված բնագավառում կան հարցեր, որոնք դեռևս չեն գտել իրենց պատասխանները: Մասնավորապես, արաբական այն փոխառությունները, որոնցով համալրվել են միջին հայերենի չթեքվող խոսքի մասերը, առ այսօր լեզվաբանական տեսանկյունից քննության առանձին նյութ չեն դարձել:

¹ Հրաչյա Աճառյանի հաշվարկներով՝ հայերենն արաբերենից փոխառել է 702 բառ [(տե՛ս Աճառյան Հ. Հ., Հայոց լեզվի պատմություն, II մաս, Ե., 1951, էջ 188), սակայն Հ. Հյուբշմանն իր իսկ դիտարկած արաբական փոխառությունների մասին ժամանակին իրավացիորեն նկատում է. «Բնականապես այս ամեն բառերն ոչ ամենը կենդանի լեզվին կպատկանի, շատն ալ, ինչպես աստղաբաշխական բառերը, ոչ թե իբր հայերեն, այլ իբր նույն իրաց արաբական անվանակոչությունը գործածված են, ուստի պետք չէ իբրև հայերեն նկատել զանոնք, շատ մ'ալ ըստ պատահման գործածված, գրական լեզվին հատուկ բառերն են, որ ժողովրդյան լեզվին մեջ ամենևին մտած չեն» (տե՛ս Հյուբշման Հ., Մեմական փոխառյալ բառերը հին հայերենի մեջ (Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1990, էջ 158)]:

² Հյուբշման Հ., նշվ. աշխ., էջ 158-170:

³ Karst J. Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901.

⁴ Патканов К. Исследование диалектов армянского языка, СПб., 1869.

⁵ Միջին հայերենի՝ գրաբարից ունեցած տարբերությունների մասին Ա. Այտընյանը մասնավորապես նշում է, որ այդ «ժամանակներու լեզվին հին գրաբարէն զատող մէկ մասն ալ եղած են նորամուտ այլազգի բառերը՝ իրենց յաճախութեամբն ու նոր ուղղագրութեամբը. ինչպէս կուղպակ, կրպակ....հարամ վաստակ կամ հալալ հայրենիք. ապիզար, փեղամբար. նալաթ, եւ այլն. սակայն գիտելի է, որ այդ վերջինները միայն արեւելեայ այլազգեաց յարաբերութեամբ գործածուած են» (տե՛ս Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 145):

⁶ Աճառյան Հ. Հ., նշվ. աշխ., էջ 189-217:

⁷ Ղազարյան Ս. Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1951, էջ 169-217:

⁸ Մուրադյան Հ. Դ., Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Հնչյունաբանություն, Ե., 1972, էջ 55-163:

⁹ Մուրադյան Ս. Հ., Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Բառագիտություն, Ե., 1972, էջ 169-296:

¹⁰ Ղազարյան Ռ. Ս., Լեզվաբանական ուսումնասիրություններ, Ե., 2010, էջ 101-112, 127-142, 155-224, 245-248 և այլն:

¹¹ Անթոսյան Ս. Մ., Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Չթեքվող խոսքի մասեր, Ե., 1972, 299-491:

Միջին հայերենի չթեքվող խոսքի մասերն առավել համալիր ուսումնասիրել է Ս. Անթոսյանը, որը, սակայն, չի անդրադարձել միջին հայերենի ածականներին և թվականներին, որոնք նշված ժամանակաշրջանում արդեն համալրել էին չթեքվող խոսքի մասերի շարքերը: Բանն այն է՝ ածականներն ու թվականները գրաբարում թեքվող խոսքի մասեր էին, մինչդեռ միջին հայերենում դրանք արդեն դադարել են ինքնին թեքվելուց և հոլովվում են միայն փոխանվանաբար գործածվելու դեպքում: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ արաբերենից փոխառյալ մակբայներից, կապերից, շաղկապներից, վերաբերականներից և ձայնարկություններից բացի՝ քննության ենք առնում նաև հայրեններում և կաֆաներում տեղ գտած՝ արաբերենից փոխառյալ ածականները¹²:

Հայրեններում տեղ գտած լեզվական նյութը քաղել ենք «Հայրեններ» աշխատությունից¹³, կաֆաներում տեղ գտածը՝ միջնադարյան մի շարք պատմություններից¹⁴ և XVI դ. բանաստեղծ Հովասափ Սեբաստացու կաֆաներից¹⁵:

Փաստական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայրեններում և կաֆաներում, գոյականներից բացի, տեղ են գտել նաև արաբերենից փոխառյալ բազմաթիվ ածականներ և մի շարք մակբայներ, շաղկապներ, վերաբերականներ ու ձայնարկություններ, որոնցով համալրվել են միջին հայերենի չթեքվող խոսքի մասերը, որոնց առանձին-առանձին կանդրադառնանք մեր շարադրանքում:

Ա. Արաբերենից փոխառյալ ածականներն իրենց թվով գիջում են միայն գոյականներին: Ըստ մեր հաշվարկների՝ դրանց թիվը հայրեններում և կաֆաներում անցնում է չորս տասնյակից:

1. Դրանց մի մասը գործածվել է առանց բառակազմական գործընթացների մեջ ընդգրկվելու, ինչպես՝ ազապ («ամուրի»¹⁶), ազիզ («սիրելի», «թանկագին»), աջեպ («տարօրինակ», «զարմանալի»), զալում («անգութ», «խիստ», «բռնավոր»), լայրիս («վայել», «հավան», «պատշաճ»), խալաս («զուտ», «անխառն», «մաքուր»), խահրըման («քաջարի», «դուրսգազն»), խաս («լավորակ», «անխառն», «իսկական», «հատուկ»), խիկար («խելոք», «իմաստուն»), խումար («գինով»), դատիր («ճակատագրական», «չար»), մասթուր («համեստ», «անարատ», «պարկեշտ»), մսքին («խղճալի»,

¹² Նշված փաստական աղբյուրներում արաբերենից փոխառյալ թվականներ չեն հանդիպում:

¹³ Մնացականյան Ա., Հայրեններ, Ե., 1986: Այսուհետև հայրենների օրինակները կրեքվեն սույն աշխատությունից՝ նշելով համապատասխան էջը և տող(եր)ը:

¹⁴ Տե՛ս Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ (այսուհետև՝ ՊԱՄ), Ե., 1989: Սրապյան Ա., Պատմութիւն վասն մանկանն և աղջկանն (այսուհետև՝ ՊՎՄԱ), Պատմութիւն վասն Փահլույ թագաւորին (այսուհետև՝ ՊՎՓԹ), Ե., 1983, Զիթունի, Պղնձէ քաղաքի պատմութիւն (աշխարհաբար) (այսուհետև՝ ՊՔՊ), Կ. Պոլիս, 1919: Մաշտոցի անվան Մատենադարանի N 723 ձեռագիր, Պատմութիւն վասն Հայոց թագաւորին, N 241 էջի ք երեսից մինչև N 246 էջի ք երեսը:

¹⁵ Տե՛ս Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ (այսուհետև՝ ՀՍ), Ե., 1964, 235 էջ:

¹⁶ Արաբական փոխառությունների իմաստների բացատրությունները քաղել ենք Հ. Մ. Ավետիսյանի և Ռ. Ս. Ղազարյանի կազմած «Միջին հայերենի բառարան» երկհատորյակից (հ. Ա, Ե., 1987, հ. Բ, Ե., 1992), ինչպես նաև վերոհիշյալ «Հայրեններ» և «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» (հ. Ա) աշխատություններում զետեղված բառարաններից:

«անտեր», «անճար»), պէմունաթ («ապերախտ», «անշնորհք»), ռահվան [«սրընթաց» (ձի)], սէֆիլ («խեղճ», «թշվառ», «աղքատ», «թույլ») և այլն: Օրինակ՝

Մսքին աշխն ի նչ անէ,

Իւր եարէն ինչպէ՞ս կու գատի (61, 31-32):

Ելլիմ ըռահվան ձիուս,

Առնիմ խարիպդ ի եքսէս (640, 41-42):

Այ իմ խորոտիկ եարուկ,

Ու գիլֆերտ՝ ի դատիր գիշեր (170, 101-102) ևն:

2. Արաբերենից փոխառյալ ածականների մի մասն էլ, միջին հայերենին անցնելով առանց փոփոխությունների, հետագայում սկսել է մասնակցել բառապաշարի՝ խառը ճանապարհով հարստացման գործընթացին նույնպես: Այսպես՝

2.1. դալատ («սխալ», «անարդար», «սուտ»), դամազ («մատնիչ»), դայրէթ («քաջասիրտ», «աներկյուղ»), դարիպ («պանդուխտ», «օտարական»), ճահել/ճահիլ («դեռատի», «անփորձ»), և այլ ածականների¹⁷ մասնակցությամբ ձևավորվել են կազմությամբ պարզ ածանցավոր և բարդ ածականներ ու գոյականներ, ինչպես՝ անդալատ, անմատաթ, լալէ, դայրէթվոր, դարիպուկ/խարիպուկ, դարիպութիւն, խամգութիւն, ճահիլ-ճիւան, ճահելուկ/ճայիլուկ և այլն: Օրինակ՝

Նորուկ ճահելուկ հարսնուկ,

Ուր իջեր դոնակն է բացեր (642, 109-110):

Ճահիլ-ճիւան նորուկ հարսնուկ,

Որ իջեր դոնակն է բացեր (798, 5-6):

2.2. Խալաս, հալալ («արդար», «մաքուր», «անարատ»), հարամ («անարդար», «անիրավ», «ապօրինի», «պիղծ»), դալատ, մէլուլ («տխուր»), պաթալ («դատարկ», «ունայն») և այլ ածականների մասնակցությամբ ձևավորվել են կազմությամբ վերլուծական և համադրական մի շարք բայեր՝ խալլսել, հալալ լինիլ, հարամ առնել, դալ(ա)տել, մէլուլիլ, պատլել և այլն, ինչպես՝

Իմ եարն ի տանէն ի դուրս՝

Զերկութին լոյսըն կու պաթլէ (371, 890-891):

Ասիկ, ուր ինծի արիր,

Մէլիւն մարիկտ ու կու լայ (657, 41-42):

Ղալտել եմ ու խօսք ասել,

Նայ խայեալ է քեզ թվեցել (168, 61-62):

Զկէսն աղքատացն տուր,

Կէսն ապալ հալալ կու լինան (ՀՄ, 130, 87-88):

Խնդայ՝ թէ խալսեցայ...(ՊՎՄԱ, 102, 267-268):

Ըգքունըս հարամ առնես...(ՊԱՄ, 255) և այլն:

Արաբերենում ածական անունը նույնպես համարվում է թեքվող խոսքի մաս: Գրաբարում լինելով թեքվող խոսքի մաս՝ ածականը միջին հայերենում արդեն դադարել է այդպիսին լինելուց: Ասվածի մասին են վկայում են նաև արաբերենից փոխառյալ

¹⁷ Որոշ ածանցավոր ածականներ սերվել են գոյականներից, ինչպես՝ լալ («թանկարժեք կարմիր քար՝ սուտակ», «շափուղա») - լալէ, մատաթ («օգնություն», «նյութական օժանդակություն», «նպաստ») - անմատաթ և այլն:

ածականները, որոնք միջին հայերենում, մասնավորապես նաև հայրեններում ու կաֆաներում հանդես են գալիս առանց քերականական փոփոխությունների: Դա բնական է, քանի որ միջին հայերենում որոշի գործառույթ կատարող ածականներն ու այլ բառեր, անկախ իրենց կազմությունից ու շարահյուսությունից, դադարել են որոշյալների հետ համաձայնության եղանակով կապակցվելուց և գերազանցապես հանդես են գալիս նախադաս շարահյուսությամբ¹⁸:

Ածականներից շատերը խոսքի մեջ հանդես են եկել միայն իրենց գլխավոր դերով՝ որոշի շարահյուսական գործառույթով, ինչպես՝

....՛ւ իմ ազիզ կեանքըս քեզ փոխան (ՊԱՄ, 240):

Իրք դալատ չաւտա սիրտդ....(ՊՎՄԱ, 107, 433) և այլն:

Որոշ ածականներ, որոշից բացի, հանդես են եկել նաև ստորոգելիի դերով¹⁹: Օրինակ՝

....՛ւ ես ի յիս յաջէպ մընացի (ՊԱՄ, 358)²⁰:

....իւրեան բան պաթալ չմնայ (ՊՎՓԹ, 148, 111)²¹ և այլն:

Մի քանի ածականներ էլ (խումար, դալատ և այլն) գործածվել են նաև մակբայաբար՝ որոշի շարահյուսական գործառույթից բացի՝ հանդես գալով նաև պարագայի շարահյուսական գործառույթով: Հմմտ., համապատասխանաբար, որոշի և ձևի պարագայի գործառույթներով հանդես եկած խումար ածականը.

Ով ձուկ ու գինի ունի

Ու խումար մարդուն խնայէ (115, 40-41) և՝

Առնում իմ եարին տանիմ

Ու պագնեմ զինք խումար ու լուրջ (238, 623-624):

Բ. Հայրեններում և կաֆաներում անհամեմատ փոքր թիվ են կազմում արաբերենից փոխառյալ մակբայները, որոնք, ըստ մեր հաշվարկների, մեկ տասնյակի չեն հասնում: Դրանցից են՝ ալանի («բացահայտ», «ակներև», «անարգել», «ազատ», «հայտնի»),

¹⁸ Վարդապետյան Պ. Կ., Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Շարահյուսություն, պարզ նախադասություն, Ե., 1975, էջ 162:

¹⁹ Ածականների համար ստորոգելիի դերն այնքան է սովորական, որ նույնիսկ մեկական անգամ գործածված մի քանի ածականներ վկայվել են միայն այդ դերով: Օրինակ՝

Թէ կտրիճ՝ ես ու դայրէթվոր,

Նայ այս խօսք քեզ՝ զինչ վարիչ կայ (101, 19-20):

²⁰ Միննուն արտահայտությունը հանդիպում է նաև հայրեններից մեկում՝

Յանկարծ ցաւըն գիս էառ,

Ես ի յիս աջէք մնացի (919, 15-16):

²¹ Միննուն արտահայտությունը հանդիպում է նաև Հովասափ Սեբաստացու կաֆաներից մեկում՝

Որ մեկն երթայ, մեկն գայ,

Իր բանն պաթալ չի մնայ (ՀՄ, 125, 7-8):

այան («հայտնի», «հրապարակով», «խսկապես»), թային («խսկապես», «հաստատապես»),
դաստ/դաստի («դիտավորությամբ», «դիտմամբ»), դաֆիլ/խաֆիլ («անզետ», «անտեղյակ»,
«հանկարծ», «անսպասելի»), պալաշ («ծրի»): Օրինակ՝

Երդամ բազրրկան եղնիմ,

Գամ, գնեմ գղումաշն ի պալաշ (117, 23-24):

Թէ թային զքեզ կու սիրէ

Հանցեղ որ բաժնեն զգառն (135, 124-125):

Թէ այէն ի քուն ես դու

Հանց ասեմ, որ հասկըցրնեմ (188, 19-20):

Սև օձն ի ծոցիս ունիմ,

Չիմանայ, քեզ դաստ կու ջանայ (100, 31-32)²²:

Ալանի և դաֆիլ մակբայները զուգահեռաբար գործածվել են նաև ածականաբար՝
հանդես գալով որոշյի շարահյուսական գործառնություն: Հմմտ.

Ամէնն ալանի հային,

Ես՝ գաղտուկ, նայ դեռ կու ճօշան (54, 63-64)²³:

Յանտէնն այլ դաֆիլ կերթան,

Շալկեցի ու հետ զընացի (525, 7-8) և՝

Սրտիկս երկու դուռն ունի,

Մէկն՝ գաղտուկ, մէկն՝ ալանի (123, 5-6):

- Քէլամ քեզ եարախս արա,

Կու գամ քեզի հանց խաֆիլ օր (50, 223-224):

Այան մակբայը զուգահեռաբար հանդես է եկել նաև վերլուծական բայի հարադրի
դերով՝ այան անել: Հմմտ.

Կանչիմ ու այան կանչիմ,

Ալամէ իսկի չամաչեմ (188, 9-10) և՝

Իմ Տէր, դուն այան մ՝ ըրե,

Հանէ կէմէկս խարան (735, 54-55):

Դասակարգելով մակբայներն ըստ կազմության՝ Ս. Անթոսյանն առանձնացնում է
նաև մակբայների՝ «քերականական ձևերից կազմված» տեսակը՝ վերջինիս մեջ տեղ
տալով մուրազ/մուրատ («իղձ», «փափագ», «նպատակ») արաբական փոխառության

²² Հմմտ. Սև օձ կայ իմ ծոցիս,

Որ չէլնէ քեզ դաստի ջանայ (201, 25-26):

²³ Հետաքրքրական է, որ նույն հայրենի տարբերակներում միևնույն տողի՝ արաբերենից փոխառյալ
ալանի («հայտնի») բառի փոխարեն գործածվել է էշկէրէ պարսկական համանիշ փոխառությունը: Հմմտ.

Ամէնն ալանի հային,

Ես՝ գաղտուկ, նայ դեռ կու ճօշան (54, 63-64) և՝

Ամէնն էշկէրէ կասեն,

Ես՝ գաղտուկ, ու դեռ կու ճօշան (74, 15-16):

գործիական հոլովաձևով արտահայտված մուրատով մակբային²⁴, որն առատորեն գործածվել է նաև հայրեններում ու կաֆաներում, ինչպես՝

Գըրկիկ ես վըզին ածի

Թէ պաքիկ մի առնում մուրատով (303, 73-74):

Թէ էնց, որ մուրատով կուգես

Եկո պա գ՝ հաւէստ անցանի (80, 51-52):

Մէկ պագն, որ մուրատով տի տաս՝

Պագդ ինձի հարամ թող լինի (80, 53-54)²⁵ և այլն:

Կարծում ենք՝ միջին հայրենում քերականական ձևերից կազմված մակբայների շարքը համալրել է նաև ճորով գործիական հոլովաձևը: Բանն այն է՝ եթե մուրատ/մուրագ գոյականը հայրեններում և կաֆաներում աչքի է ընկնում նաև ուղղական, հայցական և տրական հոլովաձևերի բազմաթիվ կիրառություններով, ապա փոխատու լեզվում առկա ճոր («ուժ», «բռնություն») գոյականից հայրեններում և կաֆաներում հանդիպում է միայն ճորով փոխառյալ գործիականը, որը բացառապես մակբայական կիրառություն ունի. այն մեկ տասնյակից ավելի կիրառությունների մեջ միայն ձևի պարագայի շարահյուսական դեր է կատարում, ինչպես՝

Ասի, թէ ի հետ երթամ,

Լուկ առնում պագիկ մը ճորով (156, 347-348):

Դաւիթ մարգարէն երգեց,

Թէ՝ «Մէրն ճորով չի լինի» (511, 41-42) և այլն:

Այս շարքում կարելի է պայմանականորեն տեղ տալ նաև արաբերենից փոխառյալ հիւզմաթ («տիրապետություն», «իշխանություն») գոյականի գործիական հոլովաձևին՝ հիւզմաթով («տիրականորեն», «իշխանավայել կերպով»), որը հայրեններում և կաֆաներում հանդիպում է ընդամենը մեկ անգամ՝

Խօշ եարս ալ ի դէմս ելաւ,

Լուկ բարն երես հիւզմաթով (315, 101-102):

Գ. Արաբերենից փոխառյալ շաղկապները, վերաբերականներն ու ձայնարկությունները հայրեններում և կաֆաներում չափազանց սակաթիվ են: Այդ բառերից են՝

1. իլլէ («միայն», «էլ», «բացի», «եթե ոչ») և համայ («բայց», «միայն թե») շաղկապները, ինչպես՝

Երկու կաթ ունի արիւն կաթէ

Յաչերուն, համայ կու թոյի (330, 627-628):

Բլլէ հատիկ մին ուր մընայ,

Կու ձրգիմ արունս ի վըրան (678, 22-23):

2. Աճապ («արդյոք», «մի թե»), հալպաթ («անշուշտ», «հարկե»), հաշայ («քալ լիցի») վերաբերականները²⁶, ինչպես՝

²⁴ Հմմտ. Անթույան Ս. Մ., նշվ. աշխ., էջ 419:

²⁵ Հմմտ. Մեր հօրն ու մօր կամքն ու խահիշով

Կը հասնէք ձեր սըրտին մուրատ մուրագով (786, 19-20):

Բանն թողուն՝ յերդիք հային՝
 Աճապ յո ըտեղ չողաճ լինին (ՀՄ, 123, 27-28):
 Պառկէ՝ ի անուշ քուն եղի,
 Հէլպէդ այս մութը լուս ունի (666, 11-12):
 Հեռի ու հաշայ, ի մ եար,
 Հօր որդւոյն խաթա չի ելնի (105, 33-34):

3. Հայիֆ («ափսոս»), իշալլայ («երանի թե», «Աստված տա») ձայնարկությունները, որոնցից վերջինս գործածվում է նաև շալայ/շալա/իշալայ/շըլլա/շահլահ տարբերակներով: Օրինակ՝

Իշալլայ կաճկտուր քլաս,
 Թէ չի գաս գիշերս ի մօտ իս (76, 105-106):
 Հայի ֆ, որ խըղճուկ մեռայ,
 Չի հասայ սըրտիս մուրատին (594, 57-58):

Դ. Հաղորդակցման ընթացքում երբեմն անհրաժեշտություն է զգացվում այս կամ այն բառային իմաստն արտահայտելու ոչ թե թեքվող, այլ չթեքվող բառերի միջոցով, որը տեղի է ունենում չթեքվող բառերի փոխանվանաբար գործածության շնորհիվ: Այս դեպքում, պահպանելով չթեքվող բառի իմաստը, այդ բառերն օժտվում են նաև գոյականին հատուկ իմաստով և քերականական կարգերով: Այսպես՝ ստորև ընդգծված ազապ բառն առաջին դեպքում գործածվել է իր բուն նշանակությամբ. ածական լինելով՝ կատարել է որոշյի շարահյուսական գործառույթ, իսկ երկրորդ դեպքում գործածվել է փոխանվանաբար. գոյականաբար գործածվելով՝ կատարել է ենթակայի շարահյուսական գործառույթ.

Ու սիրեմ ազապ աղջիկ
 Կու ձգէ Գագիկն օրմէն օր (50, 221-222) և՝
 - Մ'աներ, մ'անիծեր, նանէ ջան,
 Պէմուրատ ազապ մը պագաւ (802, 5-6):

Հմմտ. նաև հետևյալ ընդգծված բառերը՝

- Խարիպս է խարիպ երկիր,
 Ես անոր ճամբան կու պահիմ (641, 71-72):

Արաբական փոխառություններից հայրեններում և կաֆաներում փոխանվանաբար գործածվելու հնարավորություն ունեն միայն ածականները և որոշ անդեմ բայաձևեր²⁶, որոնց մի մասը, ըստ անհրաժեշտության փոխանվանաբար գործածվելով, լիարժեք

²⁶ Միջին հայերենի վերաբերականների շարքում Ս. Անթոսյանը նշում է նաև արաբերեն axir «վերջ, վերջին» գոյական-ածականից առաջացած ախիր (որից և՛ ախր) բառը (տե՛ս Անթոսյան Ս. Ս., նշվ. աշխ., էջ 474), որը հայրեններում և կաֆաներում չի հանդիպում:

²⁷ Լեզվական փաստերը վկայում են, որ հայրեններում և կաֆաներում անկախ կիրառությամբ հանդիպում են միայն որոշ փոխառյալ բայերի հարակատար դերբայի ձևեր, որոնք նույնպես գործածվել են առանց քերականական փոփոխությունների և նախադաս շարադասությամբ: Օրինակ՝

Հարսնուկ մ' Աստծոյ սիրուն,
 Բւր կպղած դուռն կու բանայ (85, 5 - 6):
 Զիմ եարն ալ ի դուրս հանէք
 Զհինայած ձեռվին լուացէք (64, 117-118):

հանդես է եկել գոյականին հատուկ բոլոր քերականական կարգերով, այն է՝ հոլովվել է, ստացել է հոդ, հանդես է եկել եզակի կամ հոգնակի թվով և այլն: Օրինակ՝

Չի գիտեմ, թ' իսո յն է հանց,

Թէ՛ գղարիպս ի լաց կու պահե (59, 181 - 182):

Փաստական նյութի դիտարկումը ցույց է տալիս, որ փոխանուն ածականներն ու անդամ բայերը հայրեններում ենթարկվում են ի արտաքին հոլովման, ինչպես՝

Քան զկթդայ ի լի կեցիր,

Մի՛ ճապդիր ամէն ճեհելի (213, 110 - 111):

Խամզողին տունն աւերի (62, 14 - 15) և այլն:

Եթե հայրեններում ու կաֆաներում փոխանուն անդամ բայերը բացառիկ կիրառություն ունեն, ապա, դրան հակառակ, բավական հաճախադեպ են փոխանուն ածականները:

Հատկանշական է, որ մի շարք ածականներ հայրեններում և կաֆաներում վկայվել են միայն փոխանվանաբար՝ կատարելով գոյականին հատուկ շարահյուսական գործառնություններ: Այդպիսի ածականներից են՝ զալում (հանդես է եկել միայն կոչականի դերով), մազում («զրկյալ», «տառապյալ», «հեզ», «հլու») (հանդես է եկել միայն ուղիղ խնդրի դերով), սէֆիլ (հանդես է եկել միայն ենթակայի դերով) և այլն: Օրինակ՝

Զալու մ, ես քեզի կասեմ,

Քո հոր տունըն աւեր մընա (84, 83-84):

Մէֆիլ ի մեջէն փրթաւ,

Նայ էլաւ էլ կանչեց՝ «Շապա շ» (118, 37-38):

Ո՛չ թագաւոր կու հարցանէ,

Ո՛չ մազում և ո՛չ հայկարայ (592, 79-80):

Խոսքի մեջ փոխանուն ածականները հանդես են եկել շարահյուսական զանազան գործառնություններով՝ դառնալով՝

ա) ենթակա.

Ղամազ կա ի մեր միջին,

Քեզ դալատ է հասկացուցեր (69, 95-96):

Ընցնող, դարձող թըղ լըսին.

«Միրու տէր ճահիլ մը կայ այրի» (797, 21-22) և այլն:

բ) Կոչական, որը մեր հաշվարկներով ամենահաճախադեպն է²⁸.

- Մի՛ քընիր, զալու մ, մի՛ քընիր,

Ե՛լ, կանգնէ՛, քեզ տէվրան արա՛յ (93, 25-26):

- Ղարի՛ պ, սիրտնեղ մի՛ կենար,

Այս դիժար օրերս կանցնի (912, 9-10):

Օ՜ր օ՜ր, իմ ատլաս ու խաս,

Քեզ աղւորին սափատն է դըրած (690, 15-16):

գ) Հատկացուցիչ.

Ա՜յ իմ քեաֆուրի քեաֆիր,

²⁸ Մեր հաշվարկներով՝ դարիպ բառը միայն 8 անգամ հանդիպում է կոչականի գործառնություն:

Մի՛ վառիր յառջև քեաֆիրի (213, 108-109):

Երթաս ի յօտար երկիր,

Ջղարիպին դատըրն գիտենաս (374, 1006-1007):

դ) Ուղիղ խնդիր.

Քանի ես մօրէս ծընել՝

Նա փատէ խամագ չեմ տեսեր (44, 51 - 52):

Կանչեմ՝ Ո՛հ, իմ Տէր Աստուած,

Զամենայն դարիպ դու պահէ (54, 51-52) և այլն:

ե) Անուղղակի խնդիր.

Երթամ, աղաչեմ զԱստուած՝

Ղամագին իզայ պատուհաս (96, 15-16):

- Հարսնո՛ւկ, եկուր պագ մի տուր,

Խարիպէն խապրիկ մի կու տամ (641, 73-74):

Քաղեմ ու տէսթէ անեմ,

Խըրկեմ դարիպիս արմուղան (676, 33-34):

Որոշ փոխանուններ կիրառվել են նաև կապական կապակցությունների մեջ՝ զէտ, յառջև, ի, նման, քան - գ, քանց - գ և այլ նախդիրների ու կապերի հետ հանդես գալով կապվող բառի դերով, ինչպես՝

- Պագ մի չէ, երկուք կու տամ

Խարիպիս քովէն գալողին (639, 27-28):

Ղաթի ու սաղայ բերէ, ու առնէ զմարդ խումրըն նման (ձեռ. 723, թերթ 245, ա երես):

...Մի՛ վառիր յառջև քեաֆիրի (213, 108-109):

Շաքրէ եղեգին միջէն

Ես քաշած՝ քանց զլատիֆտ* աղուր (153, 255-256):

Փայծեղն է գունով սև ու շինած յախոռի նրման...

- ...որ գնաց մեր օրն ի մաղպուն (ՊՔՊ, 36) և այլն:

Հայրենների և կաֆաների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, գոյականներից բացի, միջին հայերենի բառապաշարն արտաքին ճանապարհով հարստացել է նաև չթեքվող խոսքի մասերով (ածականներ, մակբայներ, շաղկապներ, վերաբերականներ և ձայնարկություններ):

Հայրեններում և կաֆաներում փոխառյալ ածականներն իրենց թվով զիջում են միայն գոյականներին: Դրանց մի մասը վկայվել է առանց բառակազմական փոփոխությունների ենթարկվելու, մյուսները մասնակցել են նաև բառապաշարի՝ խառը ճանապարհով հարստացման գործընթացին՝ ձևավորելով պարզ ածանցավոր և բարդ ածականներ, գոյականներ, մակբայներ և բայեր:

Իրենց բուն գործառնությից բացի՝ մի շարք ածականներ խոսքի մեջ գործածվել են նաև մակբայաբար, որոշ մակբայներ էլ՝ ածականաբար: Մրանից բացի՝ բազմաթիվ փոխառյալ ածականներ հայրեններում և կաֆաներում գործածվել են փոխանվանաբար²⁹՝ ենթարկվելով ի արտաքին հոլովման: Դրանք խոսքի մեջ հանդես են գալիս շարահյուսական

* Լատիֆ – հաճելի, նուրբ, շնորհալի:

²⁹ Այս շարքում բացառություն են կազմում որոշ անդեմ բայաձևեր:

*զանազան գործառնություններով, ինչին, անշուշտ, նպաստել է նաև որոշ փոխանունների՝
կապական կապակցությունների մեջ կիրառվելը:*

**АРАБСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В АЙРЕНАХ И КАФАХ,
ВОСПОЛНЯЮЩИЕ НЕИЗМЕНЯЕМЫЕ ЧАСТИ РЕЧИ**

ХАЧАТРЯН М. Г.

Резюме

Изучение айренов и каф свидетельствует о том, что благодаря заимствованиям среднеармянский язык пополнялся не только изменяемыми, но и неизменяемыми частями речи – прилагательными, наречиями, предложениями, вводными словами и междометиями. Число заимствованных прилагательных в айренах и кафах столь значительно, что их количество уступает лишь заимствованным существительным. Часть заимствований была освоена без каких-либо словообразовательных изменений, определенный массив заимствований составляют простые аффиксальные или сложные образования. И те и другие способствовали процессу обогащения лексического запаса среднеармянского языка. Заимствованные прилагательные, помимо своей основной функции, могли употребляться вместо наречий, а наречия, напротив, выступали вместо прилагательных. Примечательно, что заимствованные прилагательные встречаются с большой регулярностью, а предлоги, вводные слова и междометия редки, к тому же они, как и в исходном языке, являются неизменяемыми частями речи.